

Ե

Խնդաց Սասունը, նոր կեանք զգեցաւ,
 Սովի ճանկերից որ ազատուեցաւ.
 Մարգիկ դուրս եկան իրանց տներից,
 Թռչուն գազաններ թափնած բներից.
 Սասունում նորից եղաւ անց ու դարձ,
 Դրսի գիւղերից եռաց ցորնի բարձ,
 Հացն էժանացաւ. և ճանապարհներ
 Զը տեսան դաժան սառնամանիքներ ..



Մըհերի արած քաջագործութիւն
 Տուաւ ժողովուրդ գնահատութիւն.
 Գովաբանական երգ շարահիւսեց
 Ու «Առիւծաձեւ» անուամբ հռչակեց...

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍՅԵԱՆՑ

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

— Կեսարացի Կարապետ եպիսկոպոս Էլէգեօզեան 1848-ին Մատթէոս կաթողիկոսի պատրիարքութեան ժամանակ և նորա հրամանով գտլով Անի, Ղօշալ վանք և շրջակայ ալլ նշանաւոր վայրերը՝ անձամբ ուսումնասիրել է ամեն տեղերը և նոցա ընդարձակ ու մանրամասն տեղագիրը կազմել՝ առնելով մէջը բոլոր արձանագրութիւնները իրենց հարազատ ընթերցուածներով, որոնք միանգամայն տարբերուում են Հ. Ալիշանի «Երակի»-ի արձանագրութիւններից:

Այն անձը, որի ձեռքն անցած է եղել այդ երկը տասն տետրերից բաղկացած, ծանօթ գէպքերի ժամա-

նակ պահել է տան առաստաղի մէջ, ուր մկները կերել են 8 տետրերը՝ իսկ երկուսն ազատուելով՝ անցել են Կեսարիայի առաջնորդ գեր. տ. Տրդատ նորապսակ և ուսումնասէր եպիսկոպոսի ձեռքը: Սրբազանի ցանկութեամբ Անիի այդ նկարագիրը կսկսենք տպագրել «Լուսմայ» ի առաջիկայ գրքից:

—Այս օրերս Կ. Պօլսում գտնուել է Թիւրքիոյ հայոց Զաքարիա նշանաւոր պատրիարքի ընդարձակ և հետաքրքրական կենսագրութիւնը: Զաքարիան ժամանակակից էր Սիմէոն և Ղուկաս կաթողիկոսների, ուստի և պարզ է թէ ինչքան կարևոր է այդ նորագիւտ պատմութիւնը ժԸ դարու Հայոց եկեղեցական պատմութեան համար: Յոյս ունինք մօտիկ ապագայում հրատարակութեան տալ այդ երկը Թիֆլիսում:

—Ալաշկերտի մի քահանայ տ. Գրիգոր Նժդեհեան, որ իւր ծովիւր թողած ներկայումս Ղարսի գիւղերից մէկում է քահանայագործութիւն անում, բաւական ստուար ժողովածու է պատրաստել Ալաշկերտի ժողովրդական գրականութեան վերաբերեալ ամեն տեսակ նիւթերի. այդ նիւթերը եթէ յաջող ընտրութեամբ հրատարակուին բաւական նիւթ պիտի մատակարարեն մեր ժողովրդի կեանքի ուսումնասիրութեամբ պարապողներին: Ցանկալի է, որ Հրատարակչական Ընկերութեան ձեռքով հրատարակուէին նոքա:

—Մեզ ուղարկուած է Կ. Պօլսից «Մեր ս. հարց դաւանութիւնը» վերնագրով մի գրքոյկ, աշխատսիրութիւն ոմն Հ. Մ. Ա. (Աշճեան վարդապետի) որ ինչպէս հաղորդում են մեզ Կ. Պօլսից, հրատարակել է այդ տետրը հանգ. Ազարեան Պատրիարքի թելադրութեամբ: Հեղինակը ճգնել է ապացուցանել, որ մեր ս. Հայրերը, սկսած ս. Գրիգոր Լուսաւորչից այսր բոլորն էլ գրեթէ

Հռովմէականեկեղեցու դաւանութեանն են պատկանել (?!) և դորանով էլ Հ. հեղինակը ցոյց է տուել իւր կատարեալ ու խորին տգիտութիւնը Հայոց եկեղեցու պատմութեան մէջ: Ձարժէր իսկապէս ուշադրութիւն դարձնել այն եղուիտական ցնդաբանութիւններին, որոնք աչք են ծակում գրքոյկի մէջ, եթէ հրատարակուած չլինէր մի այնպիսի ժամանակ, երբ բոլոր հայ կաթողիկ կղերը իւր ուժերը լարած ընկած չլինէր սովեալ ու թշուառ հայ ժողովրդի ջանին. բայց նոյն իսկ այժմ մեզ շատ բան չէ մնում ասելու, վասն զի «Արարատ»-ն արդէն մի լաւ պատասխան տուեց մոլեռանդ հեղինակին, իսկ այս օրերս Կ. Պօլսի ամեն. Պատրիարքը մի ընդարձակ շրջաբերական կոնգակ է հրատարակել որպէս պատասխան այդ գրքոյկին, որի մէջ մանրամասն և պատմական զօրաւոր փաստերով հերքւում և ջախջախւում է գրքոյկի ամբողջ շէնքը և ճշմարտութիւնը վերականգնում. այդ կոնգակը մենք սիրով կը հրատարակէինք «Լուսմայ» ի ներկայ համարին որպէս լաւելուած՝ բայց մեզ ուշ հասնելով անկարող եղանք տպագրել. ցանկալի է, որ շատ տարածուէր այդ կարևոր շրջաբերականը՝ ի զգուշութիւն Հայկական ազատ և առաքելական եկեղեցուն հաւատարիմ հօտի, որին խորբալել չեն խղճահարւում Վեննայի ականաւոր Միթիթարեանք Կ. Պօլիս նստած, իսկ Վենետիկի մի քանի ապաշնորհ արբանեակներ Թիֆլիսը չափչփելով:

Ռեբրլինի համալսարանի ուսուցչապետի նախաձեռնութեամբ հիմնուած է այնտեղ անցեալ ապրիլ ամսին միջազգային մի ընկերութիւն, որ զուտ գիտական հիմք ունի և ուր մասնակցում են բոլոր երկրների նշանաւոր երաժիշտները: Այդ ընկերութեան անգամ և Հայկական երաժշտութեան ներկայացուցիչ է ճանաչուել Բերլինի

ուսանող Տ. Կոմիտաս վարդապետը, որ այս ամառ վերջացնում է իւր ուսումը և վերադառնալու է ս. Էջմիածին: Ընկերութիւնը ունի երկու հրատարակութիւն «Ամսաթերթ» և «Քառամսեայ ժողովածո», ուր տպագրում են երաժշտութեան վերաբերեալ զուտ գիտական յօդուածներ: Մեզ հաղորդում են, որ անցեալ մայիսի սկզբներին Հ. Կոմիտասը մի դասախօսութիւն է կարդացել այդ ընկերութեան մէջ Հայ եկեղեցական և ժողովրդական և մասնաւորապէս արևելեան երաժշտութեան մասին, նոյնը անցեալ յունիսին կրկնել է աւելի ընդարձակած և առաւել բազմաթիւ երաժշտական հասարակութեան առաջ: Հ. Կոմիտասի դասախօսութիւնը հրատարակուելու է ընկերութեան յիշեալ հրատարակութեանց մէջ:

ԱՌԱՆՅ ՄԻՋՆՈՐԴԻ ՓԵՍԱՅՈՒ ԳՏՆԵԼ

ՏԵՍԱԿՅՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ

Տեսարանն է սրճարանի մը մէջ.

— Ի՞նչ լրագիր կը կարդաք, պարոն:

— Քար տիւ Պօսթօր:

— Աֆէրիմ աղաս, գաղղիերէն ալ գիտէք:

— Քիչ մը:

— Ձեր անունն ի՞նչ է:

— Երուանդ:

— Որո՞ւ աղան էք:

— Ստեփաննոս աղային:

— Ստեփաննոս աղայի՞ն, պապա մարդ է, ի՞նչ կընէ

Ստեփաննոս աղան, աղէ՛կ է, ո՛րնա է:

— Աղէ՛կ է, խաթերնիդ կը հարցնէ:

— Ողջ ըստ: Ո՞ւր կը նստիք հիմա: